№ 201 ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 201

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՇՈՒՇԻ—ԵԻԼԱԽ

ԼԵՌՆ ղեկավարութեամբ **կօմիսիօնիս-առեւտ. ընկերութիւնը ՎԱՐԱԶԵԱՆԻ** կազմված յայտնում է վաճառականներին, մանաւոր անձանց, կուլտուրական, արդիւնաբերական և առևտրական հաստատութիւններին, որ այդ ընկերութիւնը սոյն սեպտեմբերի 15-ից, ի միջի այլ ձեռնարկութիւնց **Շուշում և Եւլախում** կօմիսիօներական գրասենեակներ, բաց է անում Նեակներ: Բոլոր պատուէրները կատարվելու են շուտափոյթ, ճշդութեամբ և չափաւոր վարձատրութեամբ կանխիկ: Դիմել Շուշում և Եւլախում նամակով այսպիսի հասցէով. Въ комиссіонерство Л. Варазова и К°, իսկ հեռագրով՝ Варазову-компанія.

(օ.մ.) առ. 776. 20—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ԵՒՐԻՆ, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրոք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն կանացի, ԵՒՐԻՆ և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ե. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Հ. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ե. Տէր-Նեվէսեան
Ե. Զ. Ռամիկեան
Ա. Բ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ.կ.) առ. 779 100—86

ԲԺՇԿԱՊԵՏ

ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ

(Մանագէտ մեզասեռային, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների)

վերադառնալով արտասահմանից վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնը ցեր. ժամը 1—4-ը և երեկ. ժամը 7—9-ը, Միխայլովսկի պր., 38. տէլէֆոն 6—63.

(Ա. հ. կ.) առ. 753. 10 3

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ

ОБОИ

ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

357. 50—37 (հ.կ.)

ԲԺԻՇԿ

Ե. ԲԵՐԵՍՏԵՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ԶՂԱՑԻՆ հիւանդութիւններ:
(Առանձնապէս կրծքի, թոքախտի և արեան պակասութեան):

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը

Գրաֆսկայա, 3 (Լօլիս-Մելիքովսկայա փող. կողմից):

(Ա.հ.կ.) առ. 774. 100—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է տամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Արտա-Արգասկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

(Ա.հ.կ.) առ. 769. 74—2

ԿԱՐԻՔԻ ԴԻՄԱՑ

I

Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, որ այս տարի մեր երկրի մի նշանաւոր մասում անբաւական է երկրի բերքը:

Երաշտը զրկել է շատ տեղեր հացահատիկներից և կենդանիների կերակրանիւթերից:

Քութայիսի կողմից նրա ներկայացուցիչը Պետական Դումայում ժողովել է տեղեկութիւններ տարեկան կարիքի քանակի մասին և արդէն քայլեր է ձեռնարկել հրաւիրելու բարձր կառավարութեան ուշադրութիւնը Արևմտեան Անդրկովկասի անմխիթարական դրութեան վրա:

Ոչինչ չէ արված մինչև այժմ Արևելեան Անդրկովկասի վերաբերութեամբ, ուր տնտեսական կարիքը շատ շրջաններում աղաղակում է ազգաբնակութեան դժուար կացութեան մասին:

Աւելի քան ժամանակն է, որ պատշաճաւոր տեղեներ և հասարակական շրջաններ լուրջ հոգածութեամբ զբաղվեն առաջիկայ սուր կարիքին դարման անելու խնդրով և մշակեն օգնութեան միջոցներ կարօտ երկրագործին:

Այժմ, երբ դեռ աշնան սկիզբն է, կարելի է նախօրօք խնամատարութեամբ առաջն առնել կարիքի ապագայ աւելի սուր արտայայտութիւնների հանդէս գալուն և թեթևացնել այն տառապանքները և զրկանքները, որ պէտք է ունենան երաշտից վնասված շրջանների գիւղացիները:

Մեր գիւղատնտեսական ընկերութիւնները կարող էին մի որոշ աստիճան նպաստել մեր առաջ դրած խնդրի քննութեան, պարզաբանութեան և մշակութեան և այդպիսով պատրաստել զեկուցագիր կառավարչական բարձր շրջաններին ներկայացնելու և իրական օգնութիւն ձեռք բերելու ազգաբնակութեան համար:

Մենք կը փորձենք մի երկու միջոցների վրա մատնացոյց լինել մեր յօդուածի շարունակութեան մէջ:

Ա. Բալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ ԼՐԱՏՈՒԷՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Բիթլիս, 31 օգոստոս

Վանի, Մուսուլի և Բիթլիսի վիլայէթներու սահմաններուն վրայ բնակող Հիւէի քիւրդ աւազակախումբը հետամնդելու ու բռնելու համար Վանէն ղրկուած զօրքերն ու թնդանօթներն երէկ հոս դարձան: Բէդրխանցիներուն համախոհ այդ քիւրդերէն 15-ը սպաննուեր, 6-ը ձերբակալուեր ու Ղարզան բերուեր էին յիշեալ զօրքերու կողմէն: Հակառակ այն բանին, որ կառավարութիւնը կուզէ ծածկել, բայց յայտնի է, թէ անոր միտքը եղած է ոչ թէ այդ քիւրդ աւազակները ձերբակալելով ու պատժելով երկիրը խաղաղեցնել, այլ կանխատեսելով, թէ գուցէ ազատային բէդէրխանցիները ապստամբին ու Կանիկոն ըսուած անառիկ լեռը բարձրանան, որ ռազմագիտական տեսակէտով կարևոր տեղ մըն է և ուր կը բնակէին այդ քիւրդերը, հիմակուընէ այդ տեղի գիւղերը ամրակոծեց, քիւրդ բնակչութիւնը ցրուեց ու անոր ապրուստն, իրեղէնները և տաւարները յափշտակեց ու բերաւ ծախեց Բիթլիսի և Սղերդի մէջ:

Զօրքերէն միայն 2 հոգի վիրաւորուեր էին թէև, բայց կրնայի և խնամոց պակասի երեսէն 700 զօրքերէն 80-ը հիւանդացեր էին:

Անցեալ շաբթուն Բուլանըկի և Ախլաթի շրջաններուն մէջ քիւրդերէն թալանուած թիւրք պաշտօնեաներու առարկաները գտնելու համար կառավարութիւնը ոգի ի բռին աշխատելով մասամբ ձեռք բերաւ: Մենք արդէն լաւ գիտէինք, թէ սպաննուած կամ թալանուած մարդն ու առարկան իսկամ լինելուն՝ ոճրագործները պիտի բռնուին և գողնը դուրս պիտի գայ:

Շաբթուանս մէջ հայերէն միայն երկու հոգի սպաննուած են, մէկը՝ Ախլաթի և միւսը Խիզանին մէջ: Հայերը սպաննող քիւրդերու հետևէն մարդ ղրկել, հարցնել ու հետապնդելը մեր կառավարութեան գործը չէ. նա այս երկիրները ձեռք անցնելէն ի վեր հրաժարեր է այդ դերէն. և մենք գաւառացիներս ալ վաղուց դադրեր ենք յուսալէ ու սպասելէ: Հայ գիւղացին, թէև տգէտ, բայց գիացած է կառավարութիւնը և զայն միշտ նկատած է հոգաբարձութիւն մը կոչուած քիւրդ աւազակախմբերը կազմելու, վարելու և ի հարկին արդարացնելու հայուն քրտինքովն ու դրամովը: Զարմանալի է, որ գաւառներու այդ վիճակին հանդէպ, որուն երեսէն առջի օրը 420 անձ գաղթեցին Բիթլիսէն և վաղն ալ 4000 ուրիշներ պիտի թողուն ու հեռանան, պատրիարքարանն ու իր ժողովները կը շարունակեն տակաւին մտքէ անցնելու թէ մասնաժողովներով կարելի պիտի ըլլայ արտագաղթի առաջքն առնուլ:

Լուրջ վտանգներու դէմ լուրջ միջոցներ պէտք է ձեռք առնուլ:

Մշեցի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Դործ.)

10 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Վախճանվեց Վրաստանի էկզարխ Ինոսկենտի արքեպիսկոպոսը:

Առաջին հոգեհանգիստը կատարեցին սիւոդի անդամները գլուխ ունենալով միտրոպոլիտ Վլադիմիրին:

Թաւրիզ.—Մէջլիսի ընտրութիւնները վերջնականապէս տապալվեցին Թաւրիզում: Ազգաբնակութիւնը հաւաքական յայտարարութիւն յղեց Թէհրան, որ եթէ կառավարութիւնը դարձեալ կը պնդէ ընտրութիւնները կատարելու, այն ժամանակ ազգաբնակութիւնը հրաժարվում է այնուհետև պարտադիր ճանաչել իր համար կառավարութեան կարգադրութիւնները և միանգամայն անձնատուր կը լինի ինքնավարութեան:

Շուկաները փակ են: Առանձնապէս յամառութիւն երևան հանեց բարձր հոգևորականութիւնը. վաճառականութիւնը նոյնպէս տրամադրված է ընտրութիւնների դէմ:

Թէհրան.—Բախտիարների և ժանդարմների ընդհարումը խափանելու համար վճռված է կազմակերպել կանոնաւոր բախտիար զօրամաս տեղացի օֆիցէրների հրամանատարութեամբ, պայմանով միայն, որ զօրամասը բնակվի մի առանձին քարվանսարայում: Բախտիարների զէնքը գանվելու է շէֆերի մօտ՝ վերջիններիս անձնական պատասխանատուութեան տակ:

Պետական խնամակալը չանում է հաշտեցնել փոխադարձաբար գժտված մինիստրներին և լրացնել կաբինէտի կազմը, որի մէջ կը մտնի հաւանօրէն Սիպիէդրարը:

Դեմօկրատների ագիտացիոն գործունէութիւնը և մէջլիսում սպասվող դեմօկրատական մեծամասնութիւնը անհանգստութիւն են պատճառում կառավարութեան, որովհետև հիւսիսային գաւառները մտադրութիւն են յայտնում չը ճանաչել մէջլիսը, եթէ նրա մէջ մուտք կը գործեն դեմօկրատները, և բոլորովին հրաժարվել ընտրութիւններից, որ կը զրկէ մէջլիսին ամեն նշանակութիւնից և հաւասար կը լինի Ատրպատականի անջատման:

Պարիզ. — Կոնստանդին թագաւորն այցելեց Պիշօնին և երկար խօսակցեց:

«Տանը» կարծում է, որ մեծ պետութիւններն անպայման կօգտվեն ֆինանսական մասնաժողովի զբաղմունքների ընդմիջումից մտքերի անհրաժեշտ փոխանակութեան համար:

Պուանկարէն Վէնիզէլօսին նուիրեց Պատուաւոր Լեգիոնի շքադրամի լանջախաչ:

Պուանկարէն կնոջ հետ ի պատիւ Սազոնովի և սրա տիկնոջ ճաշ տուին, ուր ներկայ էին Բարտուն, Պիշօնը, Սէվասթոպուլոսը, Մօլլարը, Պալեոլոգը:

Պարիզ.—«Պատրի» և «Ժիւռնալ» զրահանաւերի վրա նախաճաշ տրվեց ի պատիւ ռուս լէյտէնանտների և միջնմանների: Ծովային կառավարչի մօտ երեկոյեան կայացաւ պաշտօնական հացկերոյթ և պարահանդէս:

Բրէստ.—Ռուսաց հիւպատոսը ի պատիւ Հէսսէնի և ռուս օֆիցէրների պարահանդէս կազմեց, որին ներկայ էին տեղական իշխանութիւնները:

Լօնդոն.—Գիշերս սուֆրաժիստուհիները Սիֆօրտում՝ Լիվերպուլից ոչ հեռու, հրդեհեցին հոգեկան հիւանդների համար նորակառոյց տունը: Վնասը 80,000 ֆունտ է:

Նիւ-Յօրկ.—Մէկսիկայից տեղեկացնում են, որ ապստամբները Սալտիլիոյից դէպի հարաւ յօդս ցնդեցրին ազգային երկաթուղագծի գնացքը: Սպանվել են 40 զինուոր և 10 ճանապարհորդ:

Կիև.—Բացվեց քաղաքների ներկայացուցիչների առաջին համառուսական համագումարը քաղաքային ֆինանսները բարելաւելու հարցի առիթով: Եկել են 110 պատգամաւոր: Համագումարը որոշեց ամենահպատակ հեռագիր ուղարկել Թագաւոր Կայսրին և ողջոյնի հեռագիրներ՝ մինիստրների խորհրդի նախագահին ու ներքին գործերի մինիստրին՝ խնդրելով աջակցել համագումարի վճիռներին, նաև Պետական Խորհրդի և Դումայի նախագահներին՝ հաստատ յայտնելով, թէ նրանք օրէնքի կը վերածեն համագումարի վճիռները:

Տօկիօ.—Ընդդիմադիր մամուլը այն կարծիքի է, թէ անգլօ-եապօնական դաշնակցութիւնը կորցրել է իր նշանակութիւնը Անգլիայի և Ռուսաստանի փոխադարձ մերձեցման պատճառով: Եապօնիան հարկադրված է միայնակ զսպել Ռուսաստանի քայլերը Մերձաւոր Արևելքում: Անգլիան չը պաշտպանեց Եապօնիային ամերիկական հարցի առիթով և ճնշում է գործողութեան ազատութիւնը Չինաստանում: Եապօնիայի շահերը պահանջում են Անգլիայի հետ կապված դաշնակցութիւնը փոխարինել Գերմանիայի և Աւստրիայի հետ:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Հաշտութեան վեհաժողովը նիստ գումարեց ամբողջ 3½ ժ., ընդունելով պայմանագրի հետևեալ յօդուածները: Թիւրք զօրքերը հեռանում են ու զինաթափ լինում, ամիստիա, համայնքների և առանձին անձանց իրաւունքները, դիւանագիտական յարաբերութիւնները, պօստ, հեռագիր և երկաթուղիներ: Հաւատի տեղեկութիւնների համաձայն, բոլգարական մամիմեդականների եկեղեցական կայքերի հարցը մի փոքր դժուարութիւնների է հանդիպում:

«Մ. ու Ա.» կօմիտէի նիստերը դադարեցին: Երէկվայ նիստում փոխնախագահը հաշիւ տուեց կօմիտէի գործունէութեան մասին և դատափետեց Մուխտար-փաշային 120 գումարտակ մինչև բալկանեան պատերազմի սկիզբը արձակելուն համար, որ ուժեղացրեց դաշնակիցներին. քննադատեց Նազիմ-փաշայի կնքած զինադադարը, որի ընթացքում Ադրիանուպոլիսը զուրկ մնաց մթերքներից, մեղադրեց Քեամիլ-փաշայի կաբինէտին լօնդոնեան վեհաժողովում ցոյց տուած գործողութիւնների և Եանինան, Սկիւտարը և Ադրիանուպոլիսը զիջելուն համար, երբ այնտեղ կռիւ էր տեղի ունենում: Զը նայած զօրքի գերազանց յատկութիւններին, վատ զօրապետները ստիպում էին նրան քաղցած մնալ, որի պատճառով էլ ծագեց ժողովրդական շարժում, որը և տապալեց Քեամիլի կաբինէտը: Ներկայ կառավարութեանը զեկուցանողը յորդորեց պաշտպանել պետութեան շահերը և ասաց, որ մօտիկ ապագայում սպասվում է թիւրքերի սերտ մերձեցումն հայերի հետ: կօմիտէի գործունէութիւնը ուղղված կը լինի՝ զարգացնելու ազգային արդիւնաբերութիւնը և տարրական կրթութիւնը:

Բէլգրադ.—Ալբանիայի սահմանում, սկսած Դիբրից մինչև Դիակօվօ, տեղի են ունենում արիւնահեղ ընդհարումներ ալբանիների հետ, որոնք աշխատում են ներս խուժել սերբական երկիրը: Դիբրից 20 կիլօմետր հեռու՝ Պէշկոպոյում սերբական թոյլ զօրամասերը կռւում են 20,000 լաւ զինված ալբանների դէմ, որոնք գտնվում են Իսա Բոլէտինացի հրամանատարութեան ներքոյ: Կատաղի կռուից յետոյ սերբերը գրաւեցին Պէշկոպոյը, տալով խոշոր կորուստներ: Ալբանիային սահմանակից շրջաններում գտնվող զօրքերի կազմը ուժեղացնելու համար ուղարկվեց 8 հետևակ ու մի հեծեալ գունդ 7 լեռնային թնդանօթով:

Այսօր թագաւորի նախագահութեամբ կը կայանայ մինիստրների խորհրդի նիստը ալբանական հարցի առիթով:

Կառավարութիւնը լիազօրել է Ցէտինիէի իր դեսպանին՝ շարունակել բանակցութիւններ վարել սահմանները որոշելու հարցի մասին: Կարծում են, որ վեճն այս օրերս կը լուծվի:

Երեք օր առաջ ալբանները յարձակվել են սերբական երկրի վրա Դիբրի շրջակայքում:

Երէկ առ. ժամը 10-ին տեղի ունեցաւ ճակատամարտ ալբանական և սերբական զօրքերի միջև Դիբրի շրջակայքում, որ տևեց մինչև կէսօր: Սերբերը, թէև երկու վաշտ, հեռացան դէպի Կիչէվօ: Ալբանները, թէև 6000 հոգի, արտասահմանեան օֆիցէրների հրամանատարութեամբ, որոնց ինչ ազգութեան պատկանելը դեռ պարզված չէ, մտել են Դիբր: Այստեղ ուղարկված են սերբական զօրքեր:

Մինիստրների խորհուրդը անհրաժեշտ դատեաց անմիջապէս ալբանական սահմանը ուղարկել 3 հերթական պահեստի գնդեր:

Վերջին յարձակման ժամանակ ալբանները հրդեհել են բոլոր քրիստոնէական գիւղերը սահմանի մօտ մինչև Դիբր և սրի են քաշել բնակիչներին: Դիբրի ազգաբնակութիւնը ազատվեց փախչելով Կիչէվօ և Վօստիլուբ: Ալբանները զինված են արագաձիգ հրացաններով, թնդանօթներով ու գնդակացիրներով: Սերբերը կորցրին 4 օֆիցէր և շատ զինուոր սպանված:

Վիեննա.—«Վիներ-Ալգ.-Ց.»-ին հաղորդում են Սկիւտարից, որ ալբանների և սերբերի միջև կռիւը ստանում է լուրջ չափեր: Մալիսորները գրաւել են Վուսինից դէպի հարաւ ընկած լեռը, գործելով ընդդէմ չերնոգորցիների: Գրուդ, կատարատա և շկրէլ ցեղերը ժողովներ են գումարում Չերնոգորիայի դէմ միացեալ ոյժերով գործելու հարցի քննութեան համար:

Ցէտինիէ.—Կառավարութիւնը ստացաւ Պարիզի «Բանկ-դէ-Պէյը» և Միլանի «Բանկ-Կոմերչիալիէ» բանկերից 6 միլիոն ռանտա ի հաշիւ մեծ պետութիւններից երաշխաւորված 30 միլիոնի փոխառութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Մինուսինսկ, 10 սեպտեմբերի

Ձեզ հետ միասին ողբում եմ ազնիւ աշխատաւոր Տէր-Մարկոսեանի մահը: Խնդրում եմ ընդունել ցաւակցութիւնս:

Մարօ Նազարբէկ

Յարսկիէ-Կօլօդցի, 8 սեպտեմբերի

Աւանից բացակայութեան պատճառով անկարող եղայ ժամանակին յայտնել իմ խորին ցաւակցութիւնը Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահվան առիթով:

Ցանձին Տէր-Մարկոսեանի հայ ժուռնալիստիկան կորցրեց տաղանդաւոր և ժրաջան մշակներից մէկին, իսկ «Մշակը» գլխաւոր աշխատակցին: Տէր-Մարկոսեանի անունը չէինք կարդում «Մշակում», բայց գիտէինք, որ ամեն մի համարի մէջ ծաւուկ զոյութիւն ունի նրա անունը: Նրա վերին ասիճանի համեստ, անփառասէր բնաւորութիւնը թող օրինակելի լինի մեր գրողների համար: Նա աշխատում էր ասես նեակ արմատներ որպէս մեղու, սուս ու փուս: Յաւերժ յիշատակ հանգուցեալ Տէր-Մարկոսեանին:

Ց. Ք. Գրիգորեան

Խորապէս ցաւեցի պատկառելի գրական գործիչ Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահվան առիթով: Յաւերժ յիշատակ նրա ազնիւ հոգուն:

Յուսիկ. Ք. Ապրիլեան

Աստրախան, 5 սեպտեմբերի

Մօսկվայից հէնց նոր վերադարձած լինելով, կուտակված «Մշակի» համարներից

տեղեկացայ բազմաբեղուն աշխատաւոր Յովհաննէս Տէր-Մարկոսեանի ողբալի մահվան մասին, որը հոգեպէս ցնցեց ինձ, իբրև «Մշակի» գործող անձնաւորութիւնների մէջ իմ վաղեմի ծանօթ բարեկամներից մէկի մահվան բօթը։

Հանգուցեալին երիտասարդ հասակից ծանօթ լինելով, ես ամեն անգամ նրա հետ հանդիպածս ժամանակ՝ զարմանում էի նրա դէպի Գ. Արծրունին ունեցած մոլեռանդ և անդրդուելի հաւատի վրա. և նա՝ համակված իր վարդապետի գաղափարներով՝ ընթանի չափ անգամ չը թերացաւ իր հաւատի մէջ դէպի իր մեծ ուսուցիչը, իշնելով գերեզման արծրունեան դրօշակի տակ։

Գնա, սիրելի Յովհաննէս, պատմի՛ր և ասա Արծրունուդ, որ այն ծառատունկ դարատանը, որ ինքը տնկեց, այսօր շառաւիղած պերճ բարունակներով այնքան է ուռճացել, որ նրա օրվայ հազար այցելուին փոխարինում են հազար հազարներ և նրա դաղար առած դարատանի դալար թիթերի հովանու տակ իրանց պասուքն են յագեցնում, օրհներգութեան երգերը բերաններին յաւերժացնելով Արծրունու անունը և յիշատակը։

Հաղուագիւտ են Տէր-Մարկոսեանները, որոնց մահը առաւել ևս զգալի է դառնում նրա բարեկամների աչքում։

Նա լրագրի այն պատուանդաններից էր, որի վրա «Մշակի» մամուլը քառասուն տարի շարունակ շրջակացնելով շարժվում էր առանց թուլանալու։ Տէր-Մարկոսեանը հալվում, մաշվում էր՝ տանելով ուսերի վրա «Մշակի» 40 տարվայ ծանրութիւնը, ծանրութիւն՝ կապված հալածանքի, նախատինքի, զրպարտութիւնների, հայհոյանքի և, եթէ կամենաք, «դաւաճան» ու «մատնիչ» անունների հետ։ Այո, պէտք է Տէր-Մարկոսեանի հաւատը և հոգին ունենալ դիմանալու համար այդքան ոտնձգութիւններին։

Միխառնում եմ իմ խորին ցաւակցութիւնը նրա մահով դառնացած բարեկամների վշտերի հետ։

Ա. Բունիաթեանց

—

Պարիզ, 15 սեպտ. (Ն. տ.)

Ցայտնում եմ իմ անկեղծ ցաւակցութիւնը այն ծանր կորուստի համար, որ զգում է «Մշակը»՝ իր անխոնջ ու ժրաջան վաստակաւորի, Յովհաննէս Տէր-Մարկոսեանի մահվան պատճառով։

Ե. Սաֆրաստ

—

Էրզրում, 5 սեպտ.

Խորապէս կը վշտակցիմ «Մշակի» խմբագրութեան՝ անխոնջ ու համեստ աշխատաւոր Յովհ. Տէր-Մարկոսեանի մահուամբ իրեն հասած ծանր կորստին համար։

Շաւարշ Հովիւեան

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՊԻԿԱՐՈՒԹԻՒՆ

Մի մեծ, անուղղելի դժբաղդութիւն է պատահել... հայ ազգին։

Այս տարվայ մայիս ամսին կազմված և «Թիֆլիսի թեմական յօբելեանական յանձնաժողով» անունով իրան յորջորջող յանձնաժողովը հրաժարական է տուել։ Այդ հրաժարականը ստորագրել են յանձնաժողովի 12 անդամները, բացառութեամբ Սամսոն Յարութիւնեանի, Լէօի և Ն. Կանգաճեանի,— տպագրված է «Հօրիզոնի» № 202-ում։ Վերոտացած՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերջին կարգադրութիւնից, որով նա ճանաչել է երկու յօբելեանական մարմինների գոյութիւնը և առաջարկել գործել ու աշխատել իրանց շրջաններում յօդուտ դպրոցական գործի, 12 անդամները սաստիկ զայրացել են և շտապել հրաժարական տալ այժմ, երբ արդէն համազգային մեծ ոգևորմրութեան մի ամիս ժամանակ է մնում։

Եւ 12 անդամները, իրանց հեղինակութեան մասին կասկածելով, հարկ են համարել յայտարարել, թէ «Ս. Յարութիւնեանը յայտնեց իր համաձայնութիւնը, բայց նոյն օրը բացակայեց քաղաքից, իսկ Լէօն և Ն. Կանգաճեանը քաղաքից բացակայ են»։ Թէև այս՝ որպէս թէ դիպլոմատիական դարձուածքով, բայց ըստ մեզ եղովբոսական լեզուով գրված նախադասութիւնից դժուար է հասկանալ՝ արդեօք այդ երեք բացակաները միացե՞լ են 12-ին թէ՞ ոչ, բայց մենք ընդունենք, որ և Ս. Յարութիւնեանը, և Լէօն և Ն. Կանգաճեանը նոյնպէս համաձայն են այն պատճառաբանութեան, որ առաջ են բերել 12 անդամները իրանց հրաժարականի մէջ։ Առաջ բերենք այդ հրաժարականը, որ ստորագրողների բարոյական մանկութեան մի փայլուն ապացոյցն է, ինչպէս ցոյց կը տանք յետոյ, և որ ուղղված է Մեսրոպ եպիսկոպոսին։

«Ձեր սրբազնութիւնը յանձնաժողովիս ամսիս 6-ին կայացած նիստում կարդաց ժողովին հայրապետական դիւանի՝ անցեալ յուլիսի 20-ին № 1071 յանուն ձեր ուղղված գրութիւնը, ուր դիմանը Վեհ. Հայրապետի պատուէրով առաջարկում է սրբազնութեանդ յայտնել յանձնաժողովիս և բարոյական դահլիճում ընտրված մասնաժողովին, որպէսզի երկուսն էլ գործեն և աշխատեն յօգուտ դպրոցական փոնդի, կազմակերպելով ժողովարարութիւն իւրաքանչիւր մարմնոն իր շրջանում։

«Թեմական յօբելեանական յանձնաժողովը ընտրված էր Թիֆլիսի հայ հասարակութեան, ազգային կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչների ընդհանուր ժողովից իբրև մի յանձնաժողով կազմակերպելու Թիֆլիսի թեմում, հայ տաճարի դիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանական տօնախմբութիւնները համաձայն Վեհ. կաթողիկոսի կոնդակի, կատարելով հանգանակութիւն դպրոցական փոնդի համար և միջոցներ գործ դնելով միացնելու նրա հետ գրական փոնդը։

«Բայց հայրապետական դիւանի վերոյիշեալ գրութիւնը միանգամայն հակասում է մեզ ընտրող ընդհանուր ժողովների ցանկութիւններին և երկուութիւն ու պառակտում է ստեղծում յօբելեանական գործի մէջ։

Թեմական յօբելեանական յանձնաժողովը գնահատելով այն բոլոր անախորժութիւնները ու անյարմարութիւնները, որոնք կարող են ծագել երկու մասնաժողովների միևնոյն հասարակութեան մէջ գործելուց, և չը կամենալով համազգային այդ մեծ տօնի միութեան փոխարէն բաժանում հանդէս բերել, որոշեց հրաժարվել և այդ մասին զեկուցանել ձեր սրբազնութեան»։

Ինչպէս տեսնում էք յանձնաժողովը իր հրաժարականը պատրաստում է նրանով, որ իբր չէ կամենում պառակտումն առաջ բերել համազգային մեծ տօնի մէջ։ Բայց ոչ-պատրաստակամ պատճառը բացատրել է «Հօրիզոն» թերթը իր նոյն №-ում տպագրված առաջնորդող յօդուածի մէջ, որտեղ ասում է, որ «էջմիածինը մեր ազգային կուլտուրական հաստատութեանց ներկայացուցիչների ընտրած յանձնաժողովին չէ ուզում ճանաչել իբրև մեր թեմի միակ իրաւասու մարմինը յօբելեանի ու նրա հետ կապված խնդիրների կարգադրութեան գործում, այլ հրահանգում է նրա հետ միասին իրաւասու ճանաչել և մի ինքնակոչ մասնաժողով, որի ներկայացուցիչները մի քանի ամիս առաջ իրանց մասնաժողովը լուծված հրատարակեցին»։

Ուրեմն, իրան «թեմական» յորջորջող յանձնաժողովը հրաժարական է տալիս նրա համար, որ էջմիածինը յանդգնել է չը ճանաչել նրան միակ իրաւասու մարմին ամբողջ Թիֆլիսի թեմի համար և ճանաչել է բարոյական դահլիճում ընտրված «ինքնակոչ» մասնաժողովի գոյութիւնը։

Բոլոր այս պատճառաբանութիւնները, թէ պատրուակեալ և թէ անպատրուակեալ, չեն դիմանում ամենափոքր լուրջ կրիտիկայի։

Նախ և առաջ յանձնաժողովը բնաւ իրաւունք չունի անուանել իրան «թեմական» կամ «թեմի միակ իրաւասու յօբել. մարմին», քանի որ Թիֆլիսի թեմի հայ ժողովուրդը ամենևին որևէ մասնակցութիւն չէ ունեցել նրա ընտրութեան մէջ, հետևաբար, իբրև թեմական նա ինքնակոչ է բառիս ամենալայն նշանակութեամբ։ Նա ապօրէն է և իր ընտրութեան հանգամանքով, որովհետև այն կուլտուրական հաստատութիւնները (ոչ Թիֆլիսի բոլոր), որոնց ներկայացուցիչները ընտրել են նրան, բնաւ իրաւունք և մանդատ չունեն կատարելու այդպիսի մի յանձնաժողովի ընտրութիւն։

Եթէ թեմական ինքնակոչ յանձնաժողովը սպասում էր կաթողիկոսի հաստատութեան, ապա նա պարտաւոր էր սպասել այդ հաստատութեան և ոչ անմիջապէս դիմել գործունէութեան իր ընտրութեան առաջին օրից։ Յայտնի է, որ նա իր ընտրութիւնից անմիջապէս յետոյ, մի քանի ամիս առաջ, դիւան կազմեց, նիստեր ունեցաւ, որոնց մասին տպվեց տեղական թերթերում։ Եւ չը սպասելով կաթողիկոսի հաստատութեան ու գործելով մի քանի ամսից ի վեր, նա յանկարծ այսօր վեր է կենում և հրաժարական տալիս։

Զինչ ցուցանէ առակս այս։

Այն, որ նա, տեսնելով որ իր գործունէութիւնը համակրութիւն չէ գտնում հայ հասարակութեան մէջ, որ իր գաղանի նպատակը՝ մի կերպ կպել դպրոցական փոնդին և գրական փոնդը, այն ևս յօդուտ «Հայ Գրողների Ընկերութեան» չէ աջողվում, որ ոչ օք կօպէկ չէ տալիս մանաւանդ վերջին նպատակով, նա, ապագայում իրան խայտառակութիւնից ազատ պահելու համար, լաւ է համարում պատրուակ բռնել էջմիածնի կարգադրութիւնը և հեռանալ։ Եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս մի ինքն ըստ ինքեան գեղեցիկ նպատակ, որպիսին է գրական փոնդը շնորհիւ անշնորհ և սխալ գործելակերպի դառնում է անժողովրդական և անաջողութեան հանդիպում։

Եւ դրանով նա տալիս է իր բարոյական սնանկութեան փայլուն ապացոյցը։

Ինքնակոչ թեմական յանձնաժողովը լաւ գիտէր, որ միւս մասնաժողովը գործից քաշվել էր, չէր գործում, ուրեմն ասպարէզը իրան էր մնացել. նա ամբողջ ամիսներ ուներ իր ձեռքում գործելու։ Բայց նա չը գործեց, ապիկար հանդիսացաւ. համակրութիւն չը գտաւ և այժմ փախուստով ապաքէջից՝ կամենում է վարագուրել իր ապիկարութիւնը և սնանկութիւնը։

Բարի ճանապարհ ձեզ...։

Հ. Ա.

ՄԵՆՇԻԿՕՎԻ ՈՂԲԸ

—

«Մշակի» վերջին երկու համարներում մենք in extenso առաջ բերինք ռուսական նացիոնալիզմի և շովինիզմի պարագլուխ Մենշիկովի յօդուածը Կովկասի փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի՝ իր ամենահպատակութեան զեկուցագրի մէջ արտայայտած մտքերի դէմ։

Ներկայ դէպքում Մենշիկովին պէտք է ընդունել իբրև արտայայտիչ ռուսական կաղեստնի հայրենասիրութեան և ազգայնականութեան գաղափարների։

Փոխարքայ Վօրոնցով-Դաշկովի արտայայտած կարծիքները Կովկասի ազգութիւնների և ռուսական կառավարութեան դէպի այդ ազգութիւններն ունեցած և ունենալիք վերաբերմունքի մասին, ինչպէս և պետական առողջամիտ քաղաքականութեան մասին ծայրայեղ երկիրներում՝ այնպիսի ճշմարտութիւններ են, որոնք վաղուց քարոզվել են ռուսական լուսագոյն և առաջադէմ մտքերի կողմից, ճշմարտութիւններ, որոնք վաղուց գործադրվում են եւրօպական քաղաքակիրթ երկիրներում։ Սակայն այդ ճշմարտութիւնները մինչև այսօր չէին արտայայտված պաշտօնական հեղինակաւոր ամբիօնից և առաջին անգամ փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի՝ պետութեան մի նշանաւոր և կարևոր պաշտօնեայի ձայնն է լսվում նրանց մասին, ու բնական է, որ այդ ձայնը իր վրա դարձնէր ընդհանուրի ուշադրութիւնը։

Սակայն այդ հեղինակաւոր ձայնը փոխանակ սթափեցնելու այն մարդկանց, որոնք մինչև այսօր Ռուսաստանի մեծութիւնը և բարգաւաճումը տեսնում էին մանր և օտար ազգութիւնները ճնշելու, նրանց ազգային առանձնայատկութիւնները ջնջելու մէջ, որոնք անմարսելի հալածանքներ էին ստեղծում և արհեստական կերպով գրգռումներ ու դժգոհութիւններ առաջ բերում, այդ ձայնը, կրկնում ենք, փոխանակ սթափեցնելու ռուս ազգայնականներին, նրանց դժգոհութիւնն է լարեցնում և տրտունջը։ Չը կարողանալով կոմս Վօրոնցովի պէս անձին մեղադրել հայրենասիրութեան և հաւատարմութեան բացակայութեան մէջ, նրանք սկսում են աղաղակել, թէ նա ծանօթ չէ իր կառավարած երկրին, թէ նա սխալվում է, թէ ինքը, լինելով ազնիւ և հայրենասէր, անձնուէր ռուսական գահին, անկարող է երևակայել իրան այնպիսի մարդիկ, որոնք այդպէս չը լինէին, թէ, վերջապէս, նա շրջապատված է շողոքորթութիւններով կայլ։ Նրանք զարմանում և կասկածում են, թէ ինչպէս հայը, վրացին, թուրքը կարող են նոյնքան հաւատարիմ լինել Ռուսաստանին, որքան բուն ռուսները։ Նոյնն է, ինչպէս միջին դարերում կաթոլիկ ֆրանսիացիները կարծում էին, թէ հուգենօտ ֆրանսիացիները չեն կարող ֆրանսիայի հաւատարիմ զաւակներ լինել, այսօր Մենշիկովները նոյնիսկ բուն ռուս ինտելիգենցիան ևս կասկածում են հայրենասիրութեան մէջ։

Փոխարքան վկայում է, որ հայերի, վրացիների մէջ սեպարատիզմի ձգտումներ չը կան և չեն կարող լինել, և բերում է փաստեր. Մենշիկովը անհնարին է գտնում այդ բանը, որովհետև, ասում է, հայերը ունեն 6000 տարվայ պատմական անցեալ, իսկ թուրքերը՝ իբրև մուսուլմաններ չեն կարող բնաւ հաւատարիմ զգացումներ տածել դէպի քրիստոնեայ պետութիւնը, և հարցնում է, թէ ինչ ճանապարհով, ինչ եղանակով կոմս Վօրոնցով-Դաշկովը կարողացաւ ստուգել, որ Կովկասի բազմալեզու և բազմացեղ ազգաբնակութիւնը հաւատարիմ հպատակութեան զգացումներ ունի։

Նախ՝ 6000 տարվայ պատմութիւն ունենալը բնաւ չէ արգելում հայերին լինել լոյալ և հաւատարիմ հպատակներ Ռուսաստանի և այդ լոյալութեան և հաւատարմութեան ապացոյցները 300 տարիներից ի վեր նրանք տուել են. երկրորդ, կրօնական զգացումները չեն արգելում որևէ ազգի կամ ցեղի տածել հաւատարմութեան զգացումներ դէպի այն պետութիւնը, որ տալիս է նրան կեանքի, գոյքի, պատուի և զարգացման ապահովութիւններ. երրորդ՝ եթէ մի երկրի գերագոյն կառավարիչը, մի փոխարքայ չունի միջոց և հնարաւորութիւն ստուգել իր ժողովուրդների տրամադրութիւնը, ապա էլ ով կարող է կատարել այդ ստուգումը. մթթէ Մենշիկովները կամ ռուս դաշնակցութեան անդամները։

Կոմս Վօրոնցով-Դաշկովի բերանով խօսում է փորձված, խելացի և իր հայրենիքի շահերին անձնուէր, իմաստուն պետական գործիչը, որ գիտէ թէ Ռուսաստանի պէս մի լայնատարած պետութիւն կառավարելու համար անհրաժեշտ են ոչ թէ հալածանքներ, այլ կուլտուրական միջոցներ, արդարատ և ուղղամիտ վերաբերմունք, որոնք միայն կարող են երկրի այլացեղ և այլալեզու ազգութիւնները կապել, զոդել ընդհանուր հայրենիքի շահերի հետ։

Հ. Ա.

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԿԶԱՐԽԻ ՄԱՀԸ

—

Երէկ ցերեկվայ ժամը 3-ին Ալէքսանդրօ-Նեվսկի անուան զինուորական տաճարում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ Ինոկենտի արքեպիսկոպոսի յիշատակին։ Հոգեհանգիստին ներկայ էին Թիֆլիսի կառավարական և քաղաքացիական հիմնարկութիւնների ներկայացուցիչները՝ փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլովի գլխաւորութեամբ։

—

Կովկասի փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլովը ռուսաց սինոդի օբերպրօկուրորը Սաբլերից ստացաւ հետևեալ հեռագիրը.

«Վրաստանի էկզարխ արքեպիսկոպոս Ինոկենտին ի Տէր հանգեաւ այս սեպտեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 9½-ին, սրտի կաթուածից։ Վերջին երկու շաբաթը հիւանդ էր ձախ ոտքի կարմիր քամի հիւանդութեամբ (рожа)։ Թաղումը Ալէքսանդրո-Նեվսկի վանքում հաւանօրէն սեպտ. 12-ին»։

—

Ցիշեալ բօթը ստացվելուն պէս՝ Վրաստանի էկզարխութեան աղօթատունը կատարվեց առաջին հոգեհանգիստը բազմաթիւ պաշտօնական անձանց և մեծ թիւով ռուս աղօթողների ներկայութեամբ՝ սեպտ. 10-ին։

—

Երէկ տեղի ունեցան դարձեալ հոգեհանգիստներ հանգուցեալ էկզարխի յիշատակին նոյն աղօթատունը և Սիօնի մայր տաճարում։

Բացի դրանից հոգեհանգիստ են կատարում Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ էկզարխութեան բոլոր կրթական հաստատութիւնները։

—

Հանգուցեալ էկզարխի մահվան առիթով Պետերբուրգից հեռագրում են. «Սեպտեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 9 ու 30 րոպէին, յանկարծամահ եղաւ Վրաստանի էկզարխ Ինոկենտի արքեպիսկոպոսը, որին բժշկում էին ամեն օր երկու պրոֆեսոր։ Սեպտ. 9-ի առաւօտեան էկզարխը զբաղվեց սովորական գործերով, թէև դանդաղումի էր, որ թոյլ է զգում իրան։ Բժիշկը նրա դրութիւնը բաւարար գտաւ։ Երեկոյեան ժամը 9-ին էկզարխին տրվեց սովորական համեստ ընթրիքը, որից յետոյ նորին բարձր սրբազնութիւնը իր հանգրստարանակը մտաւ, անկողնում պառկեցաւ։ Ինոկենտի արքեպիսկոպոսը 300 տարիներից ի վեր նրանք տուել են. երկրորդ, կրօնական զգացումները չեն արգելում որևէ ազգի կամ ցեղի տածել հաւատարմութեան զգացումներ դէպի այն պետութիւնը, որ տալիս է նրան կեանքի, գոյքի, պատուի և զարգացման ապահովութիւններ. երրորդ՝ եթէ մի երկրի գերագոյն կառավարիչը, մի փոխարքայ չունի միջոց և հնարաւորութիւն ստուգել իր ժողովուրդների տրամադրութիւնը, ապա էլ ով կարող է կատարել այդ ստուգումը. մթթէ Մենշիկովները կամ ռուս դաշնակցութեան անդամները։

Կոմս Վօրոնցով-Դաշկովի բերանով խօսում է փորձված, խելացի և իր հայրենիքի շահերին անձնուէր, իմաստուն պետական գործիչը, որ գիտէ թէ Ռուսաստանի պէս մի լայնատարած պետութիւն կառավարելու համար անհրաժեշտ են ոչ թէ հալածանքներ, այլ կուլտուրական միջոցներ, արդարատ և ուղղամիտ վերաբերմունք, որոնք միայն կարող են երկրի այլացեղ և այլալեզու ազգութիւնները կապել, զոդել ընդհանուր հայրենիքի շահերի հետ։

Հ. Ա.

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԿԶԱՐԽԻ ՄԱՀԸ

—

Երէկ ցերեկվայ ժամը 3-ին Ալէքսանդրօ-Նեվսկի անուան զինուորական տաճարում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ Ինոկենտի արքեպիսկոպոսի յիշատակին։ Հոգեհանգիստին ներկայ էին Թիֆլիսի կառավարական և քաղաքացիական հիմնարկութիւնների ներկայացուցիչները՝ փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլովի գլխաւորութեամբ։

—

Կովկասի փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլովը ռուսաց սինոդի օբերպրօկուրորը Սաբլերից ստացաւ հետևեալ հեռագիրը.

«Վրաստանի էկզարխ արքեպիսկոպոս Ինոկենտին ի Տէր հանգեաւ այս սեպտեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 9½-ին, սրտի կաթուածից։ Վերջին երկու շաբաթը հիւանդ էր ձախ ոտքի կարմիր քամի հիւանդութեամբ (рожа)։ Թաղումը Ալէքսանդրո-Նեվսկի վանքում հաւանօրէն սեպտ. 12-ին»։

—

Ցիշեալ բօթը ստացվելուն պէս՝ Վրաստանի էկզարխութեան աղօթատունը կատարվեց առաջին հոգեհանգիստը բազմաթիւ պաշտօնական անձանց և մեծ թիւով ռուս աղօթողների ներկայութեամբ՝ սեպտ. 10-ին։

—

Երէկ տեղի ունեցան դարձեալ հոգեհանգիստներ հանգուցեալ էկզարխի յիշատակին նոյն աղօթատունը և Սիօնի մայր տաճարում։

Բացի դրանից հոգեհանգիստ են կատարում Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ էկզարխութեան բոլոր կրթական հաստատութիւնները։

—

Հանգուցեալ էկզարխի մահվան առիթով Պետերբուրգից հեռագրում են. «Սեպտեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 9 ու 30 րոպէին, յանկարծամահ եղաւ Վրաստանի էկզարխ Ինոկենտի արքեպիսկոպոսը, որին բժշկում էին ամեն օր երկու պրոֆեսոր։ Սեպտ. 9-ի առաւօտեան էկզարխը զբաղվեց սովորական գործերով, թէև դանդաղումի էր, որ թոյլ է զգում իրան։ Բժիշկը նրա դրութիւնը բաւարար գտաւ։ Երեկոյեան ժամը 9-ին էկզարխին տրվեց սովորական համեստ ընթրիքը, որից յետոյ նորին բարձր սրբազնութիւնը իր հանգրստարանակը մտաւ, անկողնում պառ-

---

սեր պէտք է ունենար փաստ, սակայն, դժբաղդաբար, փաստի փոխարէն նա ունեցել է միայն իր ապլոմբը։ Եթէ մենք շեշտել ենք կեանքի այնպիսի պատկերացման մասին, որպիսին զոյութիւն ունի, պատկերացում բառը, որ ընդգծել էինք, պէտք է հասկանալի լինէր առարկայով հետաքրքրվողի համար։ Գրասէրը գիտէ անշուշտ, որ գոյութիւն ունեցող կեանքը պատկերացումն է ստանում գեղարուեստի մէջ՝ ընկալվելով բանաստեղծի կամ գրողի գիտակցութեան մէջ, ուղղակի կամ անուղղակի կերպով։ բայց հասկանալուհամար, թէ ինչու մենք շեշտում ենք «ինչպէս որ նա (կեանքը) կայ» դարձուածքը, Գրասէրը չը պէտք է մոռանար, որ դա ուղղակի բղխում է մեր ընդունած հասարակագիտական մեթոդից և բէլինսկական ուղղութիւնից։ Ապա՝ ինչ ապշելու բան կայ այդտեղ։ մեզ շատ տարօրինակ է թւում այդ ապշութիւնը Գրասէրի կողմից, մանաւանդ որ այդ սկզբունքը շատ որոշ կերպով ընդգծել է այն նշանաւոր Բէլինսկին, որի հեղինակութիւնը պաշտպանութեան է հրաւիրվում Գրասէրի կողմից։ Բէլինսկիի այդ սկզբունքով ենք մենք միշտ զեկավարվել և ամբողջովին ընդունում ենք այն։ Թող կարդայ Գրասէրը Բէլինսկիի հետևեալ տողերը. «Такъ какъ предметъ поэзіи—истина, то величайшая красота заключается именно въ истинѣ и простотѣ, а правдивость и естественность составляетъ необходимое условіе истинно-художественнаго творчества. **Поэтъ долженъ изображать жизнь, какъ она есть, не прикрашивая и не искажая ее**». Եւ այս հռչակաւոր քննադատի հովանու տակ մտնող Գրասէրը վերոյիշեալ ցիտատի դէմ, ըստ երևոյթին, անգիտակցաբար պնդում է, թէ «գեղարուեստի անընդունելի է կոպիտ փաստ չի կարող լինել» («Բագուի Ձայն»,

№ 95)...

Եւ ամբողջովին մօդեռնիստներին յարող և նրանց այլևս ժանգոտած զէնքերով հանդէս եկող Գրասէրը երբեմն այնքան է զայրանում մեզ դէմ—իմ և Դ. Անանունի—որ նոյնիսկ մարքսիզմի պաշտպանութեան ծանր պարտականութիւն է փորձում յանձն առնել. փորձում է օգնութեան կանչել նոյնիսկ Պլեխանովին, որպէսզի սա գոնէ ապացուցանէ Գրասէրի ասածների ճշմարտութիւնը։

Մեր ոգ մտքի դէմ է սակայն ծառանում Գրասէրը,—կը հարցնէ անշուշտ ընթերցողը։ Մենք մեր նախորդ յօդուածում արտայայտել էինք այն պարզ միտքը, թէ «գրուածքի գեղարուեստական արժանիքը գտնելու համարքննադատը նախ պէտք է ծանօթ լինի այն միջավայրին, որի անդրադարձումն է այդ երկը»։ Սա այն միտքն է, որը շատ սերտ առնչութիւն ունի Բելինսկիի վերոյիշեալ սկզբունքի հետ։ Դիմենք հէնց այն Պլեխանովին, որին Գրասէրը օգնութեան է կանչում յանուն մարքսիզմի(!)։

«Первая задача критика состоитъ въ томъ, чтобы перевести идею даннаго художественнаго произведенія съ языка искусства на языкъ соціологіи, чтобы найти то, что можетъ быть названо соціологическимъ эквивалентомъ даннаго литературнаго явленія.

«При критикѣ литературнаго произведенія прежде всего нужно найти его соціологическій эквивалентъ, а затѣмъ художественныя достоинства произведенія».

Եւ սակայն այս խօսքերից ըղխող այն մտքի դէմ, որ մենք արտայայտել ենք, Գրասէրը նեղացած բացագանչում է. «Ո՞րքան վուլգար է այս զարմանալի օրէնքը և կոպիտ՝ մեր օօցիօլոգի մտածելակերպը»։ Գրասէրի հակասութիւնները ակնյայտնի են, և կոմնատրիաներ պէտք չեն...

Ապա՝ մենք խօսել էինք «Կռունկի» և «Ծիծեռնակի» գեղարուեստականութեան մասին, ի նկատի ունենալով միմիայն նրանց բանաստեղծական արժէքը (ուրիշ կերպ չէր կարող լինել)։ Գրասէրը տարօրինակ կերպով մեզ առարկելու է դուրս գալիս՝ ի նկատի ունենալով նրանց երաժշտական արժէքը... Ես խոստովանում եմ, որ դժուար է ինձ համար Գրասէրից բղխող այն երևույթի բացատրութիւնը գտնել... Ես շատ բան կարող էի առարկել այս պարագայում «Խորհուրդ խորհելով» ու շարականներով ոգևորվող Գրասէրին, սակայն քանի որ ես չեմ խօսել ոչ արեւելեան երաժշտութեան և ոչ էլ «Կռունկի» ու «Ծիծեռնակի» եղանակների մասին, այդ պատճառով աւելորդ եմ համարում կանգ առնել այդ հարցի վրա։

Շեշտելով վերոյիշեալ հանգամանքի մասին, ես համարձակ կարող եմ ասել, որ Գրասէրը նեղութիւն չէ կրել մտածելու ու ըմբռնելու իմ տուած դրական պատասխանը՝ գեղարուեստակա՞ն են արդեօք «Կռունկը» ու «Ծիծեռնակը» հարցին. որովհետև դրանց ծագումը ես կապակցել եմ քաղաքական-տնտեսական և հասարակական իրականութեան հետ, իսկ Գրասէրը ինձ դէմ նիզակներ է ճօճում՝ ակնկալում լցված ունենալով այդ երգերի երաժշտական հնչիւնները։

Եւ Սօլլոգուբների ու Սավերիանների մօդեռնիստական հոդվերն ենթակայ այս պարոնը դեռ համարձակութիւն է ունենում Մարքսի վարդապետութեան անաղարտութեան նախանձախնդիրը հանդիսանալ...

Գրասէրի մի շարք այլ առարկութիւններին մի առ մի պատասխանելը աւելորդ ենք համարում, շեշտելով միայն, որ նրանք յաճախ և կրկնութիւններ և մեր մտքերի հակասութիւններ ու աղաւաղումներ են պարունակում իրանց մէջ։

Կուզէինք ընդգծել միայն երկու հանգա-

---

*) Թողնում եմ մի կողմ նրա մի տեղ արտայայտութիւնը, որով նա մեզ վերագրած մեծամտութիւնը ռուսերէն высокомудіе է թարգմանում։ Կարծում ենք, այդ անտեղի ու անվայել դարձուածքը Գրասէրին այժմ ըստ ամենայնի անյարմար դրութեան մէջ կը դնի...

կեց և սկսեց լսել Աւետարանի ընթերցումը։ Ցանկարծ նա աղաղակեց. սպասաւորը վրա ընկաւ, մինչդեռ սրբազանը հեկեկում էր և աչքերը փակեց։ Հեռախօսով կանչվեց բժիշկ, որ միայն հաստատեց մահվան իրողութիւնը սրտի կաթուածից։ Անմիջապէս հաղորդվեց միտրոպոլիտ Վլադիմիրին և բարձր շրջաններին։ Առաջին հոգեհանգիստը կատարվեց Սարկէրի, առանձին յանձնարարութեան պաշտօնեայ իշխան Շախովսկիի և մայրաքաղաքի հոգևորականութեան ներկայութեամբ։

—

«Кавказъ» պաշտօնական օրգանը հետևեալ կցկտուր կենսագրական տեղեկութիւններն է հաղորդում հանգուցեալ էկզարխի մասին։

«Հանգուցեալ Ինոսկէնտի արքեպիսկոպոսը վախճանվեց 51 տարեկան հասակում։ Հանգուցեալը ծնվել էր 1862 սեպտ. 23-ին Վլադիմիրի նահանգում։ Նորին բարձր սրբազնութիւնը (աշխարհական ժամանակ Իվան Բէլաեւ) իր կրթութիւնը ստացաւ Վլադիմիրի հոգևոր սեմինարիայում, որի ընթացքը աւարտելուց յետոյ, Կազանի հոգևոր դպրոցում, որ աւարտեց 1885 թ-ին աստուածաբանութեան կանդիդատի կոչումով. 14 տարի յետոյ, 1899 թ., հանգուցեալը հաստատվեց աստուածաբանական մագիստրոսի աստիճանում։

«Կուսակրօնութիւնը հանգուցեալը ստացաւ 1895 թ., իսկ ձեռնադրութիւնը կատարվեց 1899 թ.։ Երկու տարի նա եղաւ Սումայի շրջանի եպիսկոպոս, Խարկովի թեմական առաջնորդ, Նարվայի եպիսկոպոս դարձեալ երկու տարի։ 1903 թ. ստացաւ Տամբովի անկախ թեմը, իսկ 1909 թ. դեկտ. 7-ից նշանակվեց Քարթալինիայի և Կախէթիայի արքեպիսկոպոս, դառնալով նաև ռուսաց սինոդի անդամ»։

—

«Кав.»-ում տպված է հանգուցեալ էկզարխի վերջին լուսանկարը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բուբայիսի հայ գաղութի կեանքից

Բուբայիս, 9 սեպտեմբերի

Երէկ տեղիս հայոց եկեղեցու բակում, բացօդեայ, եղաւ ծխականների ժողով՝ ընտրելու նոր երէցփոխ և շինարարական մասնախումբ, որը պէտք է ձեռնարկէ եկեղեցու փլված պարսպի և զանգակատան շինութեան գործին։

Ահա մի ամսից աւելի է, ինչ հրաժարված երէցփոխ Մեսրոպեանցի փոխարէն նոր երէցփոխ է ընտրված Ի. Ս. Մամաջանեան և անցեալ ամսի 7-ին թղթերը ուղարկված են կօնսիստորիային ի հաստատութիւն, բայց Թիֆլիսի աշխուժ կօնսիստորիայում հրաքով այդ թղթերը անհետացել-կորել են և այդ պատճառով այսքան ժամանակ եկեղեցին զրկված է երէցփոխից։

Վերջապէս, երկար հակաճառութիւններից յետոյ վճռվեց նորից թղթով դիմել կօնսիստորիային և աղերսել՝ Ի. Ս. Մամաջանեանցին հաստատել երէցփոխի պաշտօնում։ Ցոյս ունենք, որ հաստատութիւնը շուտով կը կատարվի, եթէ այս անգամ էլ կօնսիստորիայում քամու չենթարկվի թուղթը... Պաշտօնական գրութիւն... Մեր տեսնը էլը կորչի...

Շինարարական մասնախմբի անդամներ ընտրվեցին՝ Ցակ. Ալիբէկեան, Ի. Պ. Ամիրաղեան և Վ. Գրիգորեան։

Նորից կարծես սկսում է քահանայական հարցը զարթնել Բուբայիսում, որ այնքան մտատանջութեան պատճառ դառաւ անցեալներում։ Մեր ծխատէր Երուանդ քահանայ Մանուկեանի մատաղահաս կինը վախճանվել է անցեալ մայիսին։ Վշտաբեկ ամուսինը այժմ ցանկանում է կուսակրօնութիւն ընդունել և քաշվել որևէ մենաստան։ Սակայն ժողովուրդը ընդդէմ է այդ բանին և բոլոր ոյժով աշխատում է փոխել տալ տէր-հօր այդ որոշումը։

Մ. Նազարեան

—

Նորութիւններ Շամախուց

Շամախի, 3 սեպտեմբերի

Արդէն պարապմունքները սկված են մեր քաղաքի պետական միջնակարգ ու տարրական, թեմական և ծխական դպրոցներում։

Շամախեցիների գիտակից մասի միակ մտիթարութիւնը բէալական դպրոցն է, որ, ցաւօք սրտի պէտք է ասել, նիւթական անձուկ դրութեան մէջ է. երեկայեցէք, ամռանայ երկու ամսվայ ռոճիկները ներկայ ամսում պէտք է տան. և շնորհիւ դիրեկտոր Վ. Ե. Սիզեմսկիի կարողանում և անխոնջ աշխատում է մի կերպ ծայրը ծայրին կպցնել և այդպիսով ուսումնարանի գոյութիւնը պահպանել փակվելուց. և այդպէս, միջոցներ չը լինելու պատճառով, ընկած առաջին դասարանից մինչև վերջին դասարանը թոշակը աւելացված է 100 ր., փոխարէն 80 ռուբլու. դա քաղաքացիներիս համար շատ դժուար է։

Այստեղ անտանելի թանգութիւն է տիրում. ալիւրը 1.ր 80 կօպէկից մինչև 2 ր. պուդը, օչխարի միսը 20 կ., տաւարինը 12 կ., իւղը՝ 50 կ., նաւթը 8 կ. ֆունտը։

Վերջապէս, երկար սոսկալի երաշտից յետ տեղացին անձրևներ, որոնք բաւական զարկ տուին խաղողի բերքին։

Տոզերս գրելու ժամանակ տեղաց կարկուտ՝ կաղինի մեծութեամբ։

Պ. Ներսիսեան

—

Ընդունելութիւնը ձեմարանում

Էջմիածին, 2 սեպտեմբերի

Այս տարի նորակ խնդրատուների թիւն էր մօտ 160. սորին դասարանի համար 130, մնացեալները միւս դասարանների համար։ Սորին դասարանների համար բժշկական քննութիւնից յետոյ քննութիւն էին տալիս 90 հոգի, որոնցից ընդունվեցին 30 հոգի, 5 հոգի կասկածելի, միւսները մերժվեցին. բարձր դասարանների համար ընդունելի են 4—5 աշակերտ, այնպէս որ խնդրատուների մեծագոյն մասը պէտք է դուրսը մնայ։

Այսպիսով խնդրատուների $^1/_5$ մասը հաղիւ կարողանում է ձեմարանում ընդունվել, իսկ $^4/_5$ մասը չէ ընդունվում. ժամանակ չէ արդեօք, որ էջմիածինը մտածէ ձեմարանում զուգընթացներ բանալու։ Մ. Տ.

—

«Զիբգիր-գողերի» օտեատակութիւնները

Հին-Նախիջևան, 29 օգոստոսի

Ներկայումս Հին-Նախիջևանում թուրք, հայ, վրացի ազգութիւնների տականքների մասնակցութեամբ և եկոր գողերի նախաձեռնութեամբ կազմակերպված մի խումբ գողեր համարձակ կերպով առաջ են տանում իրանց կողոպուտները։

Դրանք լաւ ուսումնասիրած լինելով տեղացիների բնաւորութեան առանձնայատուկ գծերը, իրագէկ՝ քաղաքիս բոլոր ծակ ու ծուկին, թոյլ կողմերին, բակ ու տներին, իրանց տարբեր ազգութիւններին պատկանող անդամների շնորհիւ, անխիստ կերպով մի օր հայի, միւս օր թուրքի տուն ու տեղն են կողոպտում և կողոպտած աւարը անց են կացնում երկաթուղու կայարանի կողմերը պարտկելու, ծախելու, անհետացնելու։

Զիբգիր-գողերի առաջին դերերը, որ տեղի ունեցաւ այս գարնան սկզբին, մի փոքր անաջող անցաւ. նրանք կտրելով Փաշա-աղայի որդի Սուլթանովի սենեակի դուռը՝ վերցրել էին մի քանի հատ գորգեր, կանացի զարդեր, արծաթեղէն իրեր ու դէպի կայարան ուղևորվելիս՝ գիշերով պահակ ոստիկաններին աջողվել էր, գնդակաձգութիւնից յետոյ, թափել տալ գորգերը։

Սակայն սրանով չը յուսահատվեց խումբը. նա շարունակ առաջ է տանում իր յափշտակութիւնները. դերձակ Խորանի տունը կողոպտվեց, յետոյ դարբին Օհանի տնից կարպետ, ժիլետ ու բրիւկներ տարան և ապա օգոստոսի 25-ին Ազատ Մանուչարեանի կաշու խանութում Զուլֆայից ստացված 200 ր. փողը նոյն գիշերը թաքցնելու նպատակով գողերը մտնում են յիշեալ Մանուչարեանի տան հարևան Կարապետ Մասումեանի տունը, իսկ այդտեղից էլ ուղղակի Մանուչարեանի բնակարանը։ Այստեղ գողերը մաքրում են Մանուչարեանի որդի Սիմոնի գրպանը. կարծեցեալ գումարը չը գտնելով, վերցնում են գրպանից քսակը 20 ր. արժեցող ոսկէ մատանիով, իսկ հագուստը դէն գցում. յետոյ Մանուչարեանի տանը գիշերող փող տուող Զուլֆացի երկու մուշտարիների գրպանները խուզարկելով, մէկի արխալուղի գրպանից հանելով երեք ռուբլի, նոյնպէս արխալուղը դէն են շպրտում և ապա անցնում են ատաիրոյ՝ Կարապետ Մասումեանին, վերևի պատշգամբը. պէջակի գրպանից թղթի մէջ փաթաթած մի ծալ մուրհակները գրամ կարծելով վերցնում ու անհետանում են։

Գողերը տարել են Մասումեանի հետևեալ «սօլօ»-մուրհակները, 1) Բէգլար Աւշանից Մասումեանի տուած մուրհակի փոխարէն ստացված 500 ր., 2) Անտոն Օրդուխանեանից 300 ր., 3) Կարապետ Սարգսեանից 100 ր.։ Այդ մուրհակների մէջ ոչինչ չէ գրված բացի տուողների ստորագրութիւններից։ Եղել են և երեք հատ էլ հասարակ ստացագրեր 50, 50 և 100 ռուբլու գումարների։

Նոյն առաւօտ լուսաբացին դէպքի մասին յայտնվեց քաղաքի առաջին մասի պրիստաւին ու կազմվեց արձանագրութիւն։

Օգոստոսի 28-ին մտնելով Միրզա-Նասրուլլա Ամիրովի տունը յափշտակել են 3 հատ գորգեր 100 ռուբլուց աւելի արժողութեամբ, 15 ր. փողն էլ գրպանից վերցնելով։ Իսկ 2 օր առաջ, օգոստոսի 26-ին, Ադամ Սաղաթելեանին գիշերը շուկայում նստելով, գողերը վերջինի տունը քարշելիս անելով՝ գցում են բակը մէկ—երկու ֆունտանոց մինչև 50 քարեր. մնացեալ աղմուկ բարձրացնելով փախցնում են գողերին. դրանով գողերը ցանկացել են հաւատեցնել տանեցոց բացակայութեան մասին, սակայն վերջինների անփորձութիւնից առաջ եկած աղմուկ-աղաղակից՝ թողնում-հեռանում են Զիբգիր-գողերը։ Դէպքը նոյնպէս իմաց տրվեց ոստիկանութեան։

Ա. Տ.-Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիս է եկել երկրագործութեան նախկին գլխաւոր կառավարիչ ստատսսովետտար Երմօլովը։

✦ Թոյլատրված է խաղալ կովկասեան բեմերի վրա Պ. Բաղդասարեանի «Ադէ կէսար» անունով 5 գործ. պիէսը։

✦ Պետերբուրգից հեռագրում են, որ Կօկովցեվը ընդունելով Պետական Դումայի անդամ իշխ. Դէլօվանիին, զրուցել է նրա հետ Կովկասում սկսվող սովի մասին, ըստ որում վստահեցրել է, որ կառավարութիւնը հետևում է Բուբայիսի նահանգում սկսված դժբաղդութիւններին և աջակցութիւն ցոյց կը տայ ազգաբնակութեանը։ Ինչպէս յայտնի է, ոչ միայն Բուբայիսի, այլ և Երևանի, Գանձակի, Թիֆլիսի նահանգները համարեա ամբողջովին այս տարի զոհ դարձան չը տեսնված երաշտի ու անբերրիութեան։

✦ Պարոն Գրիգորի թաղման օրը, Վանքի եկեղեցու բակում, դագաղի վրա գամբանական խօսքերն ուսուցիչ Հովսեփեան, հոգաբարձու Պաղտէեան և Ներսիսեան դպրոցի նախկին սան Սաւուրօպոլի քահանայ Տէր-Յովհաննիսեան, որ ի միջի այլոց յիշեցրեց, թէ ինքն առաջին անգամ «Մշակում» տարիներ առաջ հարց բարձրացրեց ուսնելու Պարոն Գրիգորի մանկավարժական գործունէութեան 50-ամեակը, որից, սակայն, հանգուցեալը՝ իր չափազանց համեստութիւնից՝ հրաժարվեց։

✦ Երէկ ցերեկով յայտնի դարձաւ, որ էլեքտրաքարշի կենտրօնական վարչութիւնը գործաթող ծառայողների բոլոր պահանջներին լիակատար բաւարարութիւն է տալիս։ Այդ ուրախալի տեղեկութիւնը ստանալուն պէս գործաթող ծառայողները անմիջապէս աշխատանքները վերսկսեցին, և էլեքտրաքարշը, մօտ 17 օր անգործ մնալուց յետոյ, սկսեց գործել լուրախութիւն քաղաքի ազգաբնակութեան։

✦ Սօցիալ-դեմօկրատները և աշխատաւորականները Պետական Դումայում հարցապնդում են ուղղելու կառավարութիւնը Թիֆլիսի էլեքտրաքարշի գործադուլի առիթով, հարցնելով թէ՝ ոստիկանութիւնը ինչ իրաւունքով է միջամտել խաղաղ գործադուլին։

✦ Թիֆլիսի նահանգապետն առաջարկեց քաղաքագլխին եռանդուն միջոցներ ձեռք առնել բարելաւելու քաղաքի սանիտարա-կան-առողջապահական պայմանները, ի նկատի ունենալով Խէրսօնում երևացած խոլերան, անհրաժեշտ հրահանգներ տալ թաղական հոգաբարձուներին և հաղորդել իրան այդ հոգաբարձուների ցուցակը։ Քաղաքային վարչութիւնը ներկայումս վարվում է համաձայն նահանգապետի տուած ցուցումների։

✦ Թիֆլիսի քաղաքային դումայի երկուշաբթի օրվայ նիստում ի թիւս այլ խնդիրների քննվեցին էլեքտրաքարշի գործադուլի և Շիոյեանի ժառանգների սկսած գանգատի հարցերը։ Առաջինի նկատմամբ քաղաքագլուխը զեկուցեց, որ քաղաքային ինքնավարութիւնը անկարող է միջամտել գործաթողների և էլեքտրաքարշի վարչութեան միջև, ըստ որում վարչութեանը քաղաքի կողմից տուգանելու խնդիրը կը քննէ էլեքտրաքարշի հարցով զբաղվող քաղաքային մասնաժողովը այս երկու օրս։ Իսկ երկրորդ հարցի վերաբերութեամբ յայտնի դարձաւ, որ Շիոյեանի ժառանգները իրանց սկսած գործը տանուլ կը տան քաղաքի հետ, որ արդէն մասամբ կատարած ունի հանգուցեալի կտակի կէտերից մի քանիսը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Լոյս սեպտ. 10-ի գիշերը իր բնակարանում՝ Վօզնէսէնսկայա փող. № 18, յանկարծամահ եղաւ Թիֆլիսեցի Եֆբօսիէ Գրիգորիէվան, որի դիակն ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոց։

✦ Սեպտ. 10-ին Թիֆլիսում ժամանակաւորապէս ապրող պարսկահպատակ Բեհանդար Ալիով Իւսուֆովը յայտնեց ոստիկանութեան, որ լոյս սեպտ. 10-ի գիշերը, գտնվելով «Русскій клубъ» կոչված ակումբում, ինքն ուրիշների հետ խաղում էր բակարա թղթախաղը։ Գիշերվայ ժ. 2-ի մօտերը՝ այն ժամանակ, երբ նա՝ Իւսուֆովը տարած ունէր մօտ 500 ռուբլի, իսկ սեղանի վրա դրված էր նրա 250 ռուբլին, նրան անյայտ անձերից մէկը, որ նոյնպէս իր հետ բակարա էր խաղում, յանկարծակի սեղանի վրայից մօտ 750 ր. և, հանելով ատրճանակը, ուղղեց այն դէպի նա, պահանջելով տալ փողերը և անուանելով նրան շուլէր, ըստ որում նրա՝ Իւսուֆովի գրպանից հանեց իրան պատկանեալ մի կլօզ թուղթ։ Իսկ երբ նա խնդրեց ակումբի հերթապահ աւագին՝ Վասիլի Թօմինին արձանագրութիւն կազմել այդ մասին և յանձնել իրան պատկանեալ փողերը, միւս աւագը՝ Եւգէնի Լիշովը պատասխանեց, որ նա հեռանայ ակումբից և որ նրանք իրանց ակումբում անում են այն, ինչ որ կամենում են, որից յետոյ Իւսուֆովը հեռացաւ։

Երեքասարդը, որ ազգութեամբ, 26 տարեկան, Վիկէնտի Սկարիխինսկին է (օդաչուն), բնակվում է Ելիզավէտինսկայա փող. № 162 տանը, մատնանշեց, որ, յիրաւի, վերցրեց Իւսուֆովի փողերը և յանձնեց իր կողքին նստած Լազար Սիմիլիդիին, իսկ կարտերը՝ պրապորշչիկ Ալ. Լօրդկիպանիձէին, որ ապրում է Միքայէլեան փող., սեփական տանը։ Սկարիխինսկին ատրճանակ կրելու իրաւունք ունի։

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Ինչպէս յայտնի է Դուշէթի գաւառի Ծիսամաձղվարիանթ-կարս գիւղում գոյութիւն ունի գիւղատնտեսական դպրոց, որ հիմնվել է 1883 թ. սեպտ. 4-ից Իլ. Ծիսամաձղվարիշվիլիի խոշոր նուիրատուութեամբ և նրա ղեկավարութեամբ, որի անունով էլ կոչվում է դպրոցը «Ծիսամաձղվարիանթ-կարսիս գիւղատնտեսական դպրոց»։

Դպրոցը ունի վեց տարվայ կուրս։ Այդ դպրոցի 30-ամեայ յօբելեանը, որ լրացաւ ամսոյս 4-ին, պէտք է կատարվէր այդ օրը, բայց որովհետև նշանակված օրը արժանաւոր կերպով տօնելու համար պակասում էր պատրաստութիւն, ուստի յօբելեանական յանձնաժողովը որոշել է յետաձգել և տօնել սեպտեմբերի 29-ին, կիրակի օրը։ Սկզբից մինչև այսօր դպրոցը ունեցել է 623 աշակերտ, որոնցից վրացիներ՝ 595, ռուսներ՝ 3, հայեր՝ 23 և մահմեդականներ՝ 2։

✦ Վրաց Գիւղատնտ. Ընկերութիւնը, «Սախ. Գաղ.»-ի տեսլով, որոշել է Իլ. Ծիսամաձղվարիշվիլիի անունով հիմնել ֆոնդ, մի ստիպենդիատ պահելու այդ դպրոցում, որի ընտրողը լինելու Ընկերութիւնը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Իմ դիմումին Բանակոթ գիւղի հոգաբարձութեանը՝ «Մշակի» № 197-ում հանդէս է գալիս Ա. Յ. Պողոսեանը իր «արատաւորված պատիւը» վերականգնելու, գտնելով որ «Մշակի» № 167-ում իմ գրածը զրպարտութիւն է մեկին և այլն։

Որ իմ գրածը զրպարտութիւն չէ, այդ կարելի է եզրակացնել հետևեալ փաստերից.

ա) Սիսիանի շրջանի գործակալ Գր. քահ. Տէր-Մկրտչեանն իր մի շարք դիմումներին Բանակոթ գիւղի ներկայ հոգաբարձութիւնը՝ գիւղում պաշտօնավարող ուսուցիչ Գ. Հայրապետեանի ուսման վկայականը իրան յանձնելու՝ ստացել է պատասխան, որ յիշեալ վկայագիրը գտնվում է Ա. Յ. Պողոսեանի մօտ, երբ վերջինս, ինչպէս ինքն է գրում, պաշտօնավարում էր Ղազախի շրջանի Աչա-Ջուր գիւղում, առանց սեփական ցէնզ ունենալու, որի մասին ինքը լռում է։

բ) Ա. Յ. Պողոսեանը ոչ թէ միայն զուրկ է ուսուցչական ցէնզից, այլ և չունի III դասարանի ուսման վկայական. և հէնց այդ հանգամանքը ի նկատի առնելով՝ նա 1909 թ. Թիֆլիսում առաջարկեց ինձ իրան յանձնել իմ մի մտերիմ ընկերոջ կողմից ինձ վստահացված պետ. միջնակարգ դպրոցի աւարտական վկայականը (ես պէտք է աջակցեցնէի նրա համար թոշակ ստանալ). սակայն ես կտրականապէս մերժեցի կատարել Պողոսեանի առաջարկը, որից յետոյ, չը գիտեմ ինչ միջոցներով, վերջինս Ներքին-Ագուլիսի ուսուցչութեան պաշտօնն է ստանձնել, ուր մէկ տարուց աւել չը կարողացաւ պաշտօնավարել։

գ) Այս տարվայ յուլիսին գիւղում, ծխական մի ժողովում, ի միջի այլոց, ծխականներից մէկը՝ Աւ. Բենիաթեանցը մեղադրեց Ա. Յ. Պողոսեանին, ասելով որ նա շահագործել է Բանակոթի ուսուցչի անունը, որին մեղադրվողը ոչինչ չը կարողացաւ պատասխանել։

Այս բոլորից յետոյ եզրակացութիւնը թողնում եմ ընթերցողներին։

Խնայելով լրագրի սուղ էջերը, բաւականանում եմ այսքանով, պահանջելով վերջ տալ բազմաչարչար հայ ուսուցչի նուիրական անուան շահագործմանը։

Յով. Աղոնց

—

Մեծ-Ղարաքիլիսա, 6 սեպտ.

Ներկայ թւականի յուլիսին խորհուրդս «Մշակի» միջոցով յայտարարեց, որ իր խնամքին յանձնված դպրոցում ազատ դասեր կան, և հրաւիրեց ցանկացողներին խնդիր ներկայացնել մինչև յուլիսի 31-ը։

Վեց բաց տեղերի համար իրանց թեկնածութիւնն առաջարկողներից ի թիւս այլոց ընտրվեց Ներսիսեան դպրոցաւարտ, Շուլաւերի երբեմնի աւագ ուսուցիչ Սարգիս Բուդուրեանը, որին և ուղարկվեց մանրամասն պայմաններով հրաւիրագիր։ Պարոնը օգոստոսի 5-ին № 11,702 հեռագրով յայտնեց խորհրդին իր համաձայնութիւնը։ Եւ ապա, այն ժամանակ, երբ դպրոցիս վարչութիւնը իր հրաւիրած ուսուցչի գալստեան էր սպասում, ստանում է նրանից մի բացէիկ, որով պարոնը շնորհակալութիւն յայտնելով, իրան ցոյց տրված յարգանքի համար, առանց որևէ պատճառաբանութեան յայտարարում է իր հրաժարականը։

Աւելորդ համարելով որևէ Բուդուրեանի վարմունքը, խորհուրդս խնդրում է խմբագրութեանդ հրապարակել թերթիդ միջոցով այս գրութիւնը, քանի որ նմանօրինակ վերաբերմունքը պատահականութեան ենթարկելով դպրոցը այսուհետև ձևական և անարժէք է դարձնում թէ հրաւիրագիր և թէ համաձայնութիւն, ևս առաւել, երբ այդօրինակ վերաբերմունք թոյլ է տալիս ոչ թէ մի նորաւարտ, այլ «վեց երկար տարիների անցեալ ունեցող ու երբեմնի դպրոցի զեկավարութիւն ստանձնած ուսուցիչ»։

Նախագահ խորհրդի՝
Բժ. Ա. Վարդանեան
Աւագ ուսուցիչ՝ Հ. Ամատունի

—

Թիֆլիս, 11 սեպտեմբերի

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը՝ Յով. Ալիխանեանին, Վահան Վարդանեանին և Գ. Արովեանին, որոնք Պարոն Գրիգորի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն նուիրել են դպրոցի չքաւոր աշակերտների օգտին, առաջին երկուսը՝ 25-ական ռուբլի, իսկ վերջինը՝ 10 ռուբլի։

Պաշտօնական վերատեսչի՝
Յ. Խունտնց

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

—

Կ. Պոլիս, 23 օգոստոս

Մայր-դիւանս իր ներկայ տարւոյ 8 ապրիլ ամսաթիւ պաշտօնական յայտարարութեամբը տնօրէն ժողովի նոր կազմութիւնն ու անոր դիւանին ընտրութիւնը հրապարակելու առթիւ՝ ծանուցած էր միանգամայն թէ գանձապետի ընտրութիւնը յետաձգուած է մէկ քանի ամսուան համար, որովհետև այս պաշտօնը կը պահուի առայժմ նախորդ գանձապետ տիար Մինրան Մուրատեանի վրայ՝ որուն Պոլսէն բացակայութեանը պատճառաւ պիտի կատարուի իր կողմանէ փոխանորդաբար։

Մայր-դիւանս հիմն. կանոնագրի 31-րդ յօդուածի տրամադրութեան համաձայն պարտաւորութիւն ունի այսօր ներկայ լրագրական հրատարակութեամբ ի պաշտօնէ ծանուցանել ազգին թէ տիար Մինրան Մուրատեան վերադարձած ըլլալով վերջերս իր ուղևորութենէն, օրինական շրջանին լրման հետևանքը Ընկերութեան գանձային կարգուած է այս անգամ անոր տեղ տնօրէն ժողովի անդամներէն տիար Թագւոր Սուքիասեան, որ նոյն հանգամանքով պիտի վարէ այսուհետև Ընկերութեան գանձային գործողութիւնները։

Հայոց Մխիթարեան Ընկերութեանց
Հիմնադիր ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Գ. Հարէնց Ա. Գարատեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Պարզվում է, որ Կօկովցեվի հրաժարականի լուրերը դիտմամբ տարածում են աջակողմեանները և նացիոնալիստները նրա համար, որ Կօկովցեվին անկարող եղան իրանց կողմը թեքել։ Կօկովցեվին մօտիկ անձինք յայտնել են, որ նրա քաղաքականութեան գլխաւոր նպատակն է լինելու՝ վերածնել Ռուսաստանը մոնտեսպէս։

✦ Մարիա Կայսրուհու անուան հաստատութիւնների արհեստանոցների կոյր աշխատաւորները Պետերբուրգում միտինգ կազմելով վճռեցին գանգատվել Պետ. Դումայի անդամներին այն մասին, որ արհեստանոցների կառավարիչները, որոնք ահագին ծախքեր են անում, կոյրերին մերժում են աշխատավարձը աւելացնել։

✦ Պրեմիէր Կօկովցեվը, ասում են, այցելելու է Մանչէստէր։

✦ Ռուսաց ժող. լուս. մինիստրութիւնը աւարտել է ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու օրինագծի մշակումը։

✦ Պետերբուրգում մինիստ[illegible]

խորհուրդը լրջօրէն զբաղված է Մեծաւոր Արևելքի գործերով։

✦ Բոլգարիան դրդում է ալբանեսերին շարունակ յարձակումներ գործել սերբիական շրջանների վրա։

✦ Չինաստանում դէպքերը սառնում են պատնական կերպարանք։ Զօրքերի ապստամբութիւնը շարունակվում է։ Եապօնական պահանջները սպառնում են պատերազմ առաջ բերել։

✦ Պետերբուրգի բոլոր բանուորական հրատարակութիւնները դադարեցին լոյս տեսնելուց։ Տեղի են ունենում բանուորական միտինգներ։

✦ Միացեալ Պետութիւնների կառավարութեան առաջարկութեամբ՝ հոլանդական կառավարութիւնը մտադիր է գումարել Հագայում 1914 թ. ժողովրդական կրթութեան միջազգային՝ վեհաժողով։

✦ Ցայսնի հրէայ դասախօս ժաբոտինսկին Սիմֆէրօպոլում արգելվել է դասախօսելու ժողովուրդների ասիմիլացիայի մասին։

✦ Զինուորական մինիստր Սուխոմլինովը Պետական Դումային օրինագիծ է ներկայացրել Պետերբուրգում զինուորա-անասնաբուժական ճեմարան հիմնելու մասին։

✦ Ամերիկայի բանկերից մինում գտնվեց 70 միլիոնի ժառանգութիւն լեհ գաղթական Պուլասկիի անուան, որ վախճանվել է տարիներ առաջ։ Այժմ որոնվում են ժառանգները։

✦ Պարիզում եապօնական բժիշկ Նօգուշին երրորդ սենսացիոն գիւտն արեց. նա գտաւ միջոց բուժելու պրօգրեսսիվ անդամալուծութիւնը ուղեղի վիրաբուժութեամբ։

✦ Տօկիոյից հեռագրում են, որ Կացուրան տառապում է ստամոքսի քաղցկեղով։ Դրութիւնը անյուսալի է։

✦ Թուրքայ ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը Շեվքէթ-փաշայի կողմնակիցներից մինից ստացել է մի նամակ յայտարարութեամբ, թէ նա շուտով սպանվելու է։

✦ Թուրքիան, խրախուսված գերմանական աջողութիւններից, վճռել է պնդել, որպէսզի Ցունաստանը ընդունի իր պահանջները, վերաբերեալ վակուֆներին և ազգութիւններին, սպառնալով հակառակ դէպքում յետ կանչել իր պատգամաւորին թիւրքյունական վեհաժողովից։

✦ Չինական ներկայ պրեմիէրը, «Н. В.»-ի ասելով, աշխատում է բարեկամական կապեր հաստատել Ռուսաստանի հետ։ Այս օրերս պայմանագիր է ստորագրվելու Մոնգոլիայի հետ։

✦ Անգլիան յայտնեց Եապօնիային, որ Չինաստանի բաժանման մասին խօսք լինել չէ կարող, իսկ Եապօնիայի դիւանագիտական պահանջները Չինաստանից պաշտպանութիւն կը գտնեն Անգլիայի կողմից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

10 սեպտեմբերի

ԿԻԼԻՎ։ Գիւղատնտեսական համագումարը գիւղատնտեսական բանուորներին ապահովագրելու հարցի առիթով որոշեց յանձնարարել ազատ-տնտեսական ընկերութեանը՝ մշակել մի նախագիծ բանուորների պետական ապահովագրման մասին։ Այնուհետև համագումարը մի շարք բարի ցանկութիւններ արտայայտեց։

ՎԷՐՆԻ։ Պրժէվալի գաւառի աուլներից մինում բռնկվել է համաճարակ թոքային ժանտախտի նշաններով։ Եղել է մահացութեան մի քանի դէպք։

ՔԻՇԻՆԷՎ։ Խօլերայով հիւանդացած երեք հոգուց երկուսը մեռան։ Նոր դէպք է եղան հանված Վօլկոնեշտում։

ՐԻԳԱ։ Նաւային բանուորների գործադուլը վերջացաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արդուինի շրջանի կառավարիչ Շմէրլինգը նշանակվեց Կարսի շրջանի զինուորական նահանգապետի օգնական։

Վերադարձան արդարադատութեան և ներքին գործերի մինիստրները։

Տաշկենտում ուժեղացված պահնորդական դրութիւնը երկարվում է մի տարով ևս։

ՊԵՆՏԻԳՕՐՍԿ։ Էսէնտուկիում բժշկական սէզօնը փակվեց։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա.Լ. ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուղեւորութեան ժամանակ



10-ից 9 հոգին կապուտին է ունենում, որը վնաս. է առողջ. համար և անդուրեկան։ Ամբողջ ճանապարհ. այդ դրութիւնը շարունակվ. է։ Հետեւաբար՝ իր հետ պէտք է ունենալ մի արդիւնաւոր ՍՈՒՈՒԼԻՆ՝ լուծողական, որը ներգործ. է մեղմ և չի զրկում մարող. գործարանները։ Ներգործ. է առավել. համաձայն ընդունված չափի։ Սովորութ. և կենսաղավ. փոփոխութիւն չէ պահանջվում։

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ

լուծողական է գեղատիկներով առանց համի և հոտի։

(Ե. 46671)

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԷՄ. Ֆ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

գրաւոր աշխատութիւններից վաճառվում են մեզ մօտ հետևեալները.

1) Ընտիր հատ. ա. մ. 5-դ տպ. 80 կ.
2) Ընտիր հատ. բ. մ. 2-դ տպ. 80 կ.
3) Կրօնի պատ. Թ. Ա. Մէնդելսի 1 բ. 25 կ.
4) Խաչեր . . . . . 40 կ.

Գումարով գնողներին 10-ից ոչ պակաս 20% զեղչումն կը լինի, ճանապարհի ծախսը մեզանից, վերադիր վճարով։

Մեր հասցէն՝ Москва Владиміро-Доморуковская ул. д. Смирнова, кв. 150. Марія М. Назарьянцъ.

(Հ. 2.) 708. 6—4

Սեպտեմբերի 10-ից վաճառվում է

Դպրոցական տօներին

ԵՐԳԵՐ և ՕՏԱՆԱՒՈՐՆԵՐ

(Հայրապետական, Թարգմանչաց, Վարդանանց, տօնածառի, խառն ժողովրդական)

Գինն է 20 կօպ.

Դիմել՝ Армавиръ, учителю-регенту М. Тарахчіанъ և «Գուտտենբերգ» ու «Գիր» գրախանութներին։

(Հ.) 727. 5—2

ԻՄ ԿԱԶՄԱԾ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ

Ստանալ ցանկացողները կարող են դիմել՝

1. Ինձ՝ Бебутовская 20.
2. «ԳԻՐ» գրավաճառանոց և
3. Միւս հայ գրավաճառներին։

Զեղչ 25%.

Սահակ ա.-ք. Սահակեան

(Ե. Հ. 2.) 694. 8—7

Շուտով լոյս կը տեսնի
ԴՈՒԼԱՄԻԼԵԱՆԻ
Հաստատական՝
1914 թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ

Խիստ հեռաքրքրական, իմաստալի և զուարճալի ընտիր յաւելուածներով։

Դիմաց է 45 կօպ.

Վաճառվելու է կանխիկ։ Գումարով գնողներին՝ խնդրում ենք շտապել, այժմեանից իսկ պատուէր տալ, որ նշանաւոր գիրքս կը լինի։ Էրիւանъ. А. С. Гуламирянцу.

(Օ.մ.) 765. 3—2

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետեւեալ հրատարակութիւնները.

I
ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ
երկթ., կօշնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.։

II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.

III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.

IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.

V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.

Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանոցներում։

(Ե.Հ.Լ.) 680. 20—9

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Ամերիկական յայտնի ԲԵՐԼԻՑԻ մեթոդով յատկապէս կովկասեան դպրոցների համար կազմված

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԳԻՐՔԸ

НАША АЗБУКА

որի պատկերների մեծ մասը վերցված են Կովկասի կեանքից։

ԳԻՆԸ 30 ԿՕՊԿ։

Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։ Պահեստը «ԳԻՐ» գրախանութում։

(Ե. Հ. 2.) 749. 4—3

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

կազմած դասագրքերը

Հայ հեղինակներ. Ե. տպ. 1 ռ.
Համառօտ հայոց պատմութիւն պատկերազարդ 50 կ.

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին։ պահեստը «ԳԻՐ» գրախանութում։

(Հ.Լ.) 701. 5—5

ՆԵՐԿԱՐԱՆ
ԹԱՔ. ԱՆՏՕՆԵԱՆԻ
(Պարսկաստանցի)

(Հալաբար, Ալավերդովկայա փ. № 11)

Ընդունվում են կատուներ ներկելու համար. պատուէրներ ձեռնտու գներով.

Մի թօփ բէկը – 18 կ.
18 – 20 վերշ. մահուդվարին—արշինը 2½ կ.
15—16 վերշ. » – արշինը 1½ կ.
Մի թօփ մաւի բէկը—20 կ.

Պատուէրները կատարվում են ճշգրիտ և շուտափոյթ։ Զը հաւանած դէպքում՝ փողը վերադարձնում ենք։

(Հ.) 755. 2—2

Տպագրվում են և շուտով լոյս կը տեսնեն
ԿՈՒՐՍՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1914 թուի պատկերազարդ
„ՇԻՐԱԿ“
պատի և ծոցի
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ։

(Հ.) 735. 3—2

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեանց պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։

Գործնական դասընթացքները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէյ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առեւտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Սրբագրութիւն (առարական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն հմտիչի վրա. 7) Գայլագրութիւն, տարազագրութիւն (ամենատար ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Ռուս լեզուներ. 2) Տարազագրութիւն. 3) Գիակիլոգրաֆիա (ընմինգտան և ուր. և 4) Առեւտ. թղթակցութիւն օտար լեզուներով։ Դասընթացքները կատարվում են և դատ-դատ։ Ունկնդիրների թիւն շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնական նոներ և առեւտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(Ա. Օ.) 556. 0—29

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ
ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
170 պատկերով

Դասագիրք թէ թեմական և թէ ծխական դպրոցների համար։

Գինն է 1 ռ. 25 կօպ.

Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։ Պահեստը «ԳԻՐ» գրախանութում։

(Ե.Հ.) 750. 3—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՆ ԳՏՆՎՈՂ.
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առեւտրական հաշւապահութեան ձեռնարկի հայոց եւ ռուսաց լեզուով և դոն. հարուստ հրատար.։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առեւտրական գիտութիւն 4-ամեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առեւտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նամակագրութեան և նամակագործութեան ճիւղի հետ միասին, զանազան սիստեմներով, կատարեալ իւրացումն կրկնակի իտալական սիստեմով և առեւտ. թուաբանութիւն, առեւտ. նամակագրութիւն, մուրհակային և առեւտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վառ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենոգրաֆիա (սպագրութիւն) և 3) Բեմինգտանի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.։ Խնդրագրերի ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հատատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Կուրսերը առաջարկում են ցանկացողներին ունենալ իրանց առեւտ. գործերի համար գործնակ. և տեսականապէս պատրաստված հաշւապահներ, օգնական., կօնտր. և այլ առեւտ. ծառայողներ դիմել կուրսերի հիմնադրին։

Կուրսերի ընթացաւարտների թիւը անցնում է 2000 հոգուց։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.

(Կ. Հ. Ե.) 576. 0—22

Լոյս են տեսել և վաճառվում են
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

1) **Դասագիրք բնական պատմութեան,** *կենդանի եւ անկենդան աշխարհներ*
Երեք կամ չորս տարվայ դասընթաց ունեցող միդասեան դպրոցների համար կազմված համաձայն եկեղեցական-ծխական դպրոցների ծրագրի, գինը. 50 կ.
ԵՐԿԴԱՍԵԱՆ և ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

2) **Դասագիրք բնական պատմութեան,** *մասն I, Մարդ եւ կենդանի, գինը.* 60 կ.
3) » » » *մասն II, Բոյս* » 50 կ.

Բոլոր դասագրքերում էլ օրգանական աշխարհը կազմված է կենսաբանական ուղղութեամբ։
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1) Կենդանիների գոյները՝ 15 կ., 2) Թէ ինչու համար է ծաղիկը՝ 15 կ., 3) Թէ ինչպէս են տարածվում սերմերը՝ 15 կ.։
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Մարդու ծագումը, Վիլհելմ Բոելշէի, թարգմ. գերմ. գինը. . . 40 կ.

(Օ.մ.) 699. 10—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՐՇ. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ կազմած
ԴԱՍԸՆԿԵՐ

1) Առաջին տարի, գունաւոր պատկերներով, 5-րդ տիպ բարեփոխված . . . 40 կ.
2) Երկրորդ տարի, 4-րդ տիպ բարեփոխված . . . . . 50 կ.
3) Երրորդ տարի 3-րդ տիպ բարեփոխված . . . . . 60 կ.
4) Չորրորդ տարի . . . . . 70 կ.

ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ թոյլատրված են Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից որպէս դասագիրք։

Ա. տարվայ Այբբենարան տպվում է ամբողջովին ձեռագրով—բացի դրանից նոր մտցված են դասերի հետ կապ ունեցող նկարչական պարզ գծերով զարգացրած պատկերներ։

Բոլոր տարիներն ունեն արտագրութեան համար բազմաթիւ ձեռագիր յօդուածներ՝ հիմնված ուղղագրական կանոնների վրա։

Երրորդ և չորրորդ տարիների մէջ կան բազմաթիւ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՁԵՒԱԳՈՒՅՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ։

Դիմել՝ Թիֆլիս «ԳԻՐ», «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», Երևան՝ «ԱՐԱՐԱՏ» և Յովհաննիսեան գրավաճառներին և կամ կազմողներին՝ Երևանի թեմական դպրոց։

Գումարով գնողներին կը լինի զեղչ։

(Հ. Ա. Հ.) 647. 12—9

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի Թ. ԽԶՄԱԼԵԱՆԻ և Գ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆԻ կազմած
ԿԱՅԾԵՐ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ դասագրքի Ա. տարին։ Գինը 25 կօպ.։

Լոյս տեսան և վաճառվում են՝ ԿԱՅԾԵՐ Բ. տարի, գինը 40 կ., ԿԱՅԾԵՐ Գ. տարի—50 կ., ԿԱՅԾԵՐ Դ. տարի—70 կ.։ Գումարով գնողներին զգալի զեղչ։ Բազմաթիւ ձեռագիր օրինակներ քերականական կանոնների շուրջը և շարադրական ու իրազգնական պատկերներ։ Վաճառվում են Կովկասի բոլոր յայտնի գրավաճառանոցներում և Ալէքսանդրոպոլում՝ կազմողների մօտ։ Մեր հասցէն՝ Александрополь. Учителю Геворку Яковлевичу Микаелянцъ. Большая Слободская, № 42.

(Օ. մ.) 741. 6—4

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութեան ժամերը.
Առ. մ. 8-ից մինչև ցեր. ժ. 2-ը դպրոցում—I Тумановская № 13.
Երեկ. ժ. 5-ից մինչև ժ 8-ը կուրսերում—Михайловскій пр. № 53.

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ԱՌԵՒՏՐ. ԹՈՒՔԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ. 771. 10—3

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկոլայեւսկայա, 36, Վօրոնցովի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—26

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица. домъ казенный